Բուրավետ, ախորժագռկիր լավաշը Հայաստան աշխարհի սուրբ հացն է: Ճերմակափրփուր ու նրբաթերթ լավաշի մասին մի ասք է հյուսվել: Հայոց Արամ արքան կռվի ժամանակ գերի է ընկնում ասորիների թագավոր Նոսորին: Արամն ընդունում է հաղթող Նոսորի պայմանը : Ըստ պայմանի հայոց թագավորը ազատ կարձակվեր, եթե տասը օր մնար անոթի, իսկ տասնմեկերորդ օրը նետաձգությամբ մրցեր Նոսորի հետ և հաղթեր: Հայերը տասը օր, նրբաթրթ հացը հնարամտորեն թաքցնելով, հասցնում են իրենց արքային: Նոսորին թվում էր, թե տասը օրում Արամն ուժասպառ և սրաատեսությունից զրկված կլիներ: Սակայն Նոսորի ջանքերն ապարդյուն էին: